

ԱՄՍՎԵՐՋԻ ՀԱՆԴԷՍ ԺԱՌԱՆԳԱԻՈՐԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԵՒ ԸՆԾԱՅԱՐԱՆԻ

Նրկուշաբթի, 8 Յունիս 1998, երեկոյեան ժամը եօթին, տեղի ունեցաւ ժառանգաւորաց վարժարանի եւ ընծայարանի Ամավերջի հանդէսը. ժառանգաւորաց վարժարանի հանդիսասրահին մէջ: Օրուայ հանդիսութեան կը նախագահէր Ամեն. Սրբազան Պատրիարք Հայրը: Ներկայ էին ուսուցչական կազմը, աշակերտները եւ Նրուսաղէմահայ գաղութէն կոկիկ րազմութիւն մը:

Նկատելով որ այս տարուայ Ամավերջի հանդէսը կը գուգադիպի Հոգեգալստեան Տօնին, քեմը զարդարուած էր Ս. Գիրքէն մէջքերումներով:

Հանդիսութիւնը բացուեցաւ ժառանգաւորաց վարժարանի «Սիրտ ի սիրտ եւ ձեռն ի ձեռն» ֆայլերգով, խօսք Թորգոմ Պատրիարք Գուշակեանի, երաժշտութիւն Շահան Պէրպէրեանի, եւ Հայաստանի Հանրապետութեան «Մեր Հայրենիք» ֆայլերգով, խօսք Միքայէլ Նալբանտեանի, դաշնագրող Բարսեղ Կանաչեան:

Բացման խօսքը կատարեց եւ տարեկան կրթական ծրագիրը ներկայացուց ժառանգաւորաց վարժարանի Տեսուչը՝ Տ. Էմմանուէլ Արդ. Աթաջանեան:

Տեսուչ Հայր Սուրբը, իր տեղեկագրին մէջ անդրադարձաւ Ս. Հոգիին կենարար եւ վերանորոգիչ դերին թէ՛ եկեղեցւոյ եւ թէ՛ մեր կեանքին մէջ: Վեր բերաւ կրթական աշխատանքը որ կատարուած է ժառանգաւորաց վարժարանէն ներս, աշակերտներուն ջանասիրութիւնը, ուսուցչական կազմին անսակարկ նուիրումը եւ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան

Հօր հայրական հոգածութիւնը եւ խնամքը ժառանգաւորաց վարժարանի հանդէպ, եւ հոգեւոր կեանքին գերակայութիւնը:

Ապա, եկեղեցիին Ս. Հոգիով լեցուած ըլլալու հանգամանքը ներկայացուցին քեմականացումով, «Հեղ եւ ի մեզ Հոգին Սուրբ Աստուած» վերտառութեամբ, հետեւեալ աշակերտները.՝ Յովնան Բաղդասարեան, Ալեքսանդր Փարսեան. Արմէն Կուծանեան, Յարութիւն Նդիայեան Համլետ Խաչատրեան, Միքայ Կոստանեան, հեղինակուած Տ. Էմմանուէլ Արեղայի կողմէ:

Յաջորդաբար արտասանեցին եւ երգեցին աշակերտները, «Նոր Ծաղիկ» Տաղ յարութեան մշակում Էդուարդ Յակոբեանի, երգող Արմէն Սինանեան, նուագակցող Տ. Վարդապարեան. «Գարնանամուտ» Յովհաննէս Շիրազի, արտասանող Ասատուր Բալչեան. «Օրօրոցային» Յովհաննէս Պրամս, դաշնակ Գեղամ Անջունեան. «օրացոյց» արտասանող Բաբիկ Վարդանեան. Վովֆանգ Մոցարտ «Սերենատ», դաշնակ Տրց. Արման Մինասեան. «Արու-Լալա Մահարի» Աւետիք Իսահակեան, արտասանող Յովնան Բաղդասարեան. «Աւէ Մարիա» Կաչիսի, երգող Ասատուր Բալչեան, նուագակցող Տ. Վարդապարեան. «Ռալիննայում» Աւետիք Իսահակեան, արտասանող Արմէն Կուծանեան. հայրենասիրական երգերու շարք, մշակումով խմբավար Վ. Փիրումեանի եւ դաշնակահար Տ. Վարդապարեանի «Նս իմ անոյշ Հայաստանի» Նդիշէ Զարեան, արտասանող Յարութիւն Նդիայեան. «Ազգ Փառապանծ» Աննօ Բարաջանեան, խօսք Աշոտ Գրաշու:

Այս կատարուեցաւ մրցանակներու եւ վկայագրերու բաշխում, Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր՝ Տ. Թորգոմ Արք. Մանուկեանի կողմէ, որ փակման խօսքը եւ օրհնութիւնը կատարեց գնահատելով կատարուած կրթական եւ մշակութային աշխատանքը: Յորդորեց աշակերտներուն՝ նոխացնել Ս. Հոգիէն իւրաքանչիւրին բաշխուած մոֆի եւ հոգիի շնորհները, ֆիզիքապէս մարզուած մնալ,

պարտականութեանց կատարման մէջ գուարթամիտ եւ աշխոյժ մշակները դառնալու համար Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ: Հանդիսութիւնը վերջացաւ՝ միացեալ երգուած Ս. Աթոռոյ Մաղթերգով «Օրհնեցէ՛ք զՏէր յօրհնութիւն ի նոր» եւ Պատրիարք Սրբազան Հօր Պահպանիչով եւ «Հայր Մեր»ով:

ԱՆՈՒՇԱՒԱՆ Ծ. ՎՐԴ. ԶԳԱՆԵԱՆ

Ս. ԹԱՐԳՄԱՆԶԱՅ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԻ ԵՒ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՄՍՎԵՐՋԻ ՀԱՆԴԷՄՆԵՐ

Սրբոց Թարգմանչաց Մանկապարտէզի ամսվերջի հանդէսը տեղի ունեցաւ Շաբաթ, 30 Մայիս 1998ին, ժառանգաւորաց Վարժարանի սրահին մէջ, նախագահութեամբ Սրբազան Պատրիարք Հօր: Ծաղիկ դասարանի հինգ աշակերտներ շրջանաւարտութեան վկայական ստացան: Միաբանութեան անդամներու, ծնողներուն եւ ներկայ հասարակութեան գոհունակութիւնը մեծ էր, ի տես մանուկներու աշխուժութեան բեմին վրայ, դեկավարութեամբ երկու ուսուցիչներուն՝ Օր. Սուսաննա Միրզոյեանի եւ Օր. Այրին Գաբլանեանի:

Իսկ 7 Յունիս 1998, Կիրակի երեկոյին, նոյն սրահին մէջ տեղի ունեցաւ Ս. Թարգմանչաց Երկրորդական Վարժարանի Ամսվերջի հանդէսը, նախագահութեամբ Սրբազան Պատրիարք Հօր եւ ներկայութեամբ Միաբանութեան անդամներուն, ծնողներուն եւ հասարակութեան: Տասնմէկ շրջանաւարտներ եւ դպրոցի երգչախումբը կոկիկ յայտագիր մը հրամցուցին, հինգ լեզուներով իրենց երախտագիտութիւնը յայտնելով Սրբոց Յակոբեանց Միաբանութեան, ուսուցչական կազմին եւ իրենց ծնողներուն: Վարժարանի Տեսուչ Հոգ. Տ. Թէոդորոս Արք. Զափարեանի

տեղեկագրէն յետոյ, մրցանակներու բաշխումը տեղի ունեցաւ: Պատրիարք Սրբազան Հայրը, իր գնահատական եւ փառալիչ խօսքին ընթացքին, Գալիֆորնիոյ մէջ կազմուած Սրբոց Թարգմանչաց Վարժարանի Սանուց Միութեան հաստատած մրցանակներն ալ յանձնեց, Պր. Սեդրակ Պաղտոյեանի անունով հաստատուած հիմնադրամէն յատկացումներ կատարելով Հայերէն Լեզուի եւ Հայոց Պատմութեան, իսկ Օր. Տիգրանուհի Նալպանտեանի անունով՝ Անգլերէն Լեզուի եւ Ընդհանուր Գիտութեան մէջ յաջողագոյն աշակերտներուն: Իսկ Տիկին Արսինէ Քասախեանի անունով հաստատուած մրցանակը տրուեցաւ նախակրթարանի մէջ Բարձրագոյն Միջին ստացած աշակերտին:

Ի պատիւ շրջանաւարտներուն, Հայ Երիտասարդաց Միութիւնը 11 Յունիսին, եւ Հայ Օգնութեան Միութիւնը 15 Յունիսին, իրենց ակումբներուն մէջ ճաշկերոյթով եւ նուէրներով պատուեցին շրջանաւարտները, երգի, արտասանութեան, մաղթանքի խօսքերով, վարչականներուն, Տեսուչ Հայր Սուրբին, Շրջանաւարտներուն եւ Սրբազան Հօր կողմէ: